ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԼԱՏՖՈՐՄ
ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՖՈՐՈՒՄ

ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ԲԱՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ

ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆ
COMMITMENT TO CONSTRUCTIVE DIALOGUE

ԵՄ-ՀՀ «ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԵՎ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ»

քաղաքացիական հասարակության պլատֆորմի ընտրություններին որպես թեկնածու մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ

1. Առաջադրող հասարակական կազմակերպության կամ հիմնադրամի պետական գրանցման վկայականը, կանոնադրությունը, կազմակերպության ոլորտային գործունեության մասին տեղեկություններ (Organization profile),

2. Հավակնորդի կենսագրական տվյալները /CV/,

3. Առաջադրող հասարակական կազմակերպության կամ հիմնադրամի ղեկավար մարմինների կազմերը՝ նշելով, թե անդամներից որոնք են աշխատում պետական կառավարման մարմնում, եթե կան այդպիսիք,

4. 2017-2020թթ. ընթացքում ՀԸԳՀ-ով սահմանված ոլորտներից որեւէ մեկում ծրագր(եր)ի իրականացման վերաբերյալ տեղեկանք (ՀԿ-ից կամ հիմնադրամից) եւ դրա(նց) արդյունքներով կազմված զեկույց(ներ)ը թղթային կամ էլեկտրոնային տարբերակով կամ դրանց էլեկտրոնային հղումները,

5. Հայաստանի եվրոպական ինտեգրման գործում առնվազն 3 տարի գործունեության իրականացման մասին վկայող տեղեկանք (ՀԿ-ից կամ հիմնադրամից),

6. ՀԸԳՀ-ի իրականացման գործում պետական կառավարման մարմիններին խորհրդատվական աջակցություն տրամադրելու տեսլականը՝ շարադրված մինչեւ մեկ A4 էջ ծավալով,

7. ՀԸԳՀ-ի կատարման գործընթացի մշտադիտարկման տեսլականը՝ շարադրված մինչեւ մեկ A4 էջի ծավալով,

8. Կազմակերպական կարողությունները հավաստող տեղեկանք (ՀԿ-ից կամ հիմնադրամից), որը տեղեկություններ կպարունակի աշխատակազմի, ֆինանսավորման, գրասենյակային տարածքի, կայքի առկայության եւ այլ կարողությունների մասին,

9. Վերջին 3 տարիների ընթացքում 10 եւ ավելի կազմակերպությունների հետ արդյունավետ եւ կառուցողական համագործակցություն իրականացնելու մասին տեղեկանք (ՀԿ-ից կամ հիմնադրամից),

10. Հայտարարագիր այն մասին, որ հավակնորդը նախընթաց առնվազն 6 ամիսների ընթացքում չի եղել պետական իշխանության մարմնի աշխատակից՝ մշտական աշխատանքի պայմանագրով կամ վճարովի ծառայություններ չի մատուցել պետական իշխանության մարմնին, ինչպես նաեւ՝ ընտրվելու դեպքում ՔՀՊ կազմում չի դառնալու պետական իշխանության մարմնի աշխատակից կամ վճարովի ծառայություն չի մատուցելու պետական իշխանության մարմնին:

Ֆինանսավորվում է
Եվրամիության կողմից